ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ, ՎԱՅՔԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՋԵՐՄՈՒԿԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Եղեգնաձորի ՍԱՏԳ

Արձանագրվել է խախտման 4 դեպք, որի արդյունքում ենթակա է ետ գանձման 644.5 հազար դրամ

1.Արձանագրության 1.1 կետով նշված 34.0 հազար դրամը ամբողջությամբ վերականգնված է քաղաքացու կողմից:

2. Արձանագրության 1.2 կետով նշված 588.0 հազար դրամի չափով խախտումն ներկայացվել է սոցիալական աջակցության Եղեգնաձորի տարածաշրջանի խորհրդի վերաքննարկմանը: Եղեգնաձորի սոցիալական աջակցության խորհրդի 2016թ. մայիսի 30-ի թիվ 5 արձանագրության 3-րդ կետի որոշմամբ որոշվել է ամփոփոխ թողնելու Եղեգնաձորի սոցիալական աջակցության խորհրդի 2015թ. մայիս և 2015թ. հուլիս ամիսներին կայացրած որոշումները՝ չկիրառել "Կ" կոդը և մարված համարել 588.0 հազար դրամը:

3.Արձանագրության 6-րդ կետով նշված 22.5 հազար դրամը ամբողջությամբ վերականգնված է քաղաքացու կողմից:

Վայքի ՍԱՏԳ

Արձանագրվել է խախտման 4 դեպք, որի արդյունքում ենթակա է հետ վերադարձման 252.0 հազար դրամ ընտանեկան նպաստի գումար և 162.0 հազար դրամ մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի գումար:

1. Վայքի սոցիալական համագործակցության համակարգող խորհուրդը ընդունելով արձանագրված ընտանիքների դիմումները և հաշվի առնելով այդ ընտանիքների վճարունակ չլինելու հանգամանքը մարված է համարել 252.0 հազար դրամ ընտանեկան նպաստի գումարը:

2. ՀՀ Վերահսկիչ պալատի կողմից արձանագրել է 180.0 հազար դրամ մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի ավել վճարված գումար/ 10ամիս/, սակայն ըստ հաշվարկների ավել է վճարվել 9 ամիս՝ 162000դրամ, որը ամբողջությամբ ետ է գանձվել:

Ջերմուկի ՍԱՏԲ

Հայաստանի Հանրապետության Վերահսկիչ պալատի խորհրդի 2017թ. հունվարի 9-ի թիվ 1/2 որոշման հիման վրա իրականացված վերահսկողության արդյունքում Ջերմուկի ՍԱՏԲ-ում արձանագրվել է 4 դեպք 287.0/ երկու հարյուր ութսունյոթ/ հազար դրամի չափով հավելավճար, կապված աշխատելու և աշխատավարձի չափի վերաբերյալ տվյալների հետ: Նշված արդյունքները ամփոփելու վերաբերյալ Ջերմուկի քաղաքապետ Վ. Հովհաննիսյանի կողմից հրավիրվել է խորհրդակցություն և տրվել հստակ առաջադրանքներ:

1. Կատարել կրկնակի այցելություններ նշված ընտանիքներ և գնահատել սոցիալական կարիքները:

2. ՈՒսումնասիրության արդյունքում պարզել, այդ ընտանիքներն ի վիճակի են ավել ստացած գումարները ետ վերադարձնել պետբյուջե թե ոչ:

Այցելությունից պարզվել է, որ նշված 4 ընտանիքներն էլ գտնվում են սոցիալապես անապահով վիճակում: Ներկա պահին այդ 4 ընտանիքներից ընտանեկան նպաստի իրավունքից օգտվում է 2 -ը :

Կատարված տնային այցելության արձանագրությունները ներկայացվելու է Ջերմուկի սոցիալական համագործակցության համակարգող խորհրդի քննարկմանը:

1. Ջերմուկի սոցիալական համագործակցության համակարգող խորհուրդն ընդունելով արձանագրված ընտանիքների դիմումները և հաշվի առնելով այդ ընտանիքների վճարունակ չլինելու հանգամանքը մարված է համարել 229.0 հազար դրամ ընտանեկան նպաստի գումարը:
2. Իսկ 58.0 հազար դրամը, որը նախկինում մարված է եղել Ջերմուկի սոցիալական աջակցության խորհրդի կողմից, որոշվեց խորհրդի որոշումը թողնել անփոփոխ:

Վայոց ձորի մարզպետի տեղակալ Մ Հարությունյան